

ՄԱՅԻՍ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2021



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեֆիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Գոտիավորման աշխատանքներ	23
3.6. Քլորի և խլեղու ջրի մաքրման կայանների ծառայություն	26
3.7 1-85 թեժ գիծ	28
4. Լրատվական ծառայություն	29
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	31
5.1. Փաստաթղթերի մշակում	32
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	32
5.3. Դասընթացներ/սեմինարներ	32
5.4 Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացնող միջոցառումների կիրառում	34
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	35
6.1. Համակարգչային ցանց	36
6.2. Ինտերակտիվ համակարգ	36

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածք. Կենտրոն տեղամասի աշխատակիցների կողմից «Գառնի-Երևան» ջրատարի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ համայնք Բարձրաշեն, Լճեր կոչվող տարածքում առկա է մոտ $Q=60$ լ/վրկ ջրաքանակով վթար: Վերոնշյալ հատվածում գտնվող $D=720$ մմ պողպատե խողովակը գտնվում էր խիստ քայքայված վիճակում, ինչն անհնարին էր դարձնում իրականացնել վթարների վերացումը: Տեղամասի աշխատակիցների կողմից $D=720$ մմ պողպատե քայքայված ջրատարի $L=115$ գծ/մ երկարությամբ հատվածը փոխարինվել է $D=820$ մմ $L=61$ գծ/մ և $D=720$ մմ $L=54$ գծ/մ պողպատե խողովակներով:



● Սարի Թաղ 18 փողոցում գոյություն ունեցող $D=50$ մմ $L=100$ մ պողպատե հին ջրագիծը գտնվում էր մաշված և վթարված վիճակում: Ջրագիծը շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=63$ մմ $L=100$ մ պոլիէթիլենային նոր ջրագիծ: Թվով 11 բնակիչ-բաժանորդների ջրաչափերը փոխարինվել և տեղադրվել են տարածքից դուրս՝ ջրաչափական դիտահորերում: Իրականացված աշխատանքների արդյունքում վերացել են նշված հատվածում ջրագծի մաշվածության պատճառով առաջացող վթարները:

● «Էրեբունի» վարչական շրջանի Ջրաշենից Մուշական թաղամաս հասնող $d=90$ մմ վթարային վիճակում գտնվող պոլիէթիլենային ջրագիծը անցնում էր բաժանորդների բակերի և հողամասերի միջով՝ խոչընդոտելով վթարների վերացման աշխատանքներին և հնարավորություն չէր տալիս բարելավել թաղամասի ջրամատակարարումը, քանի որ ջրագծում ճնշման փոքր ավելացման դեպքում առաջանում էին նոր վթարներ: Վթարային վիճակը վերացնելու և ջրամատակարարման որակը բարձրացնելու նպատակով $L=70$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային վթարային ջրագիծը փոխարինվել է նոր $d=90$ մմ $L=12$ գծ/մ և $d=110$ մմ $L=58$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով, միացման կետում կառուցվել է դիտահոր և տեղադրվել է $d=100$ մմ փական:



Արարատի մարզ



● «Արտաշատ» տեղամասի կողմից սպասարկվող Դաշտաքար համայնք, 2-րդ և 3-րդ փողոցները սնող ջրագծերը կառուցվել էին 1990-ական թվականներին անորակ $d=110$ մմ պոլիէթիլենային խողովակներով, որի վրա առկա էին բազմաթիվ վթարներ: «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից շահագործումից հանվել է $d=110$ մմ պեթ խողովակը և կառուցվել է $D=32-75$ մմ $L=616$ գծ/մ երկարությամբ ջրագիծ, իրականացվել են $d=20$ մմ $L=200$ գծ/մ ընդհանուր երկարությամբ անհատական միացումներ, տեղադրվել են թվով 22 ջրաչափական դիտահորեր և ջրաչափեր:

● «Արտաշատ» տեղամասի «Վեդի» հենակետ Տափերական Դամբայի փողոցում գտնվող D=50մմ L=70գծ/մ անորակ, շարքից դուրս եկած պոլիէթիլենային խողովակները տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել են D=50մմ L=40գծ/մ նոր պոլիէթիլենային խողովակներով:



● Արարատ-Արտաշատ խճուղու D=100մմ L=100գծ/մ պողպատե քայքայված խողովակները փոխարինվել են D=110մմ L=100գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով:

Մայիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	5766
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	24698
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	29720
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	16380
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	6
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3499.4
Կառուցված ջրագիծ	մ	2949
Կառուցված կոյուղագիծ	մ	296
Վերացված գաղտնի վթարներ	հատ	20
Փոխարինված փական	հատ	20
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	681
Մաքրված դիտահոր	հատ	522
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	24.3
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1216
Ջրահեռացման ցանցում	հատ	2191
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	460

Մայիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	681	1194	526

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մայիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամաչափ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	299	14	3	2	0	1	0	0	0	319
Փոխարինված	438	21	7	6	1	7	0	0	0	480
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	291	62	3	3	2	4	2	2	0	369
Ընդամենը	1028	97	13	11	3	12	2	2	0	1168

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100մմ տրամաչափի 1168 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մայիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1150	244	0
2	Մաշտոց	940	167	30
3	Շահումյան	1475	157	10
4	Զեյթուն	310	183	0
5	Շիրակ	1106	431	17
6	Արթիկ	180	71	6
7	Ապարան	0	25	0
8	Ալավերդի	1120	12	24
9	Աշոցք	50	5	0
10	Բերդ	120	5	3
11	Իջևան	1405	49	0
12	Լոռի	2180	214	6
13	Նոյեմբերյան	0	15	0
14	Սպիտակ	180	34	0
15	Ստեփանավան	0	22	0
16	Թալին	0	22	0
17	Տաշիր	470	13	0
18	Էջմիածին	0	145	18
19	Չարենցավան	920	92	0
20	Աբովյան	2230	62	0
21	Հրազդան	1360	110	24
22	Աշտարակ	1950	6	0
23	Կենտրոն	700	267	0
24	Հյուսիս	0	227	51
25	Հարավ	0	339	2
26	Էրեբունի	0	155	2
27	Արմավիր	0	93	4,5
28	Արտաշատ	0	87	0
29	Էջմիածին	0	146	21
30	Աշտարակ	0	36	0
31	Արարատ	0	79	55,5

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
32	Մասիս	0	45	0
33	Գավառ	1165	25	0
34	Սևան	90	85	9,5
35	Մարտունի	0	22	0
36	Վարդենիս	0	6	0
37	Ճամբարակ	70	16	0
38	Դիլիջան	70	49	0
39	Վայք	0	16	0
40	Եղեգնաձոր	1305	26	0
41	Ջերմուկ	0	25	0
42	Սիսիան	540	64	0
43	Գորիս	0	40	0
44	Կապան	700	77	0
45	Մեղրի	0	27	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	21786	4036	214

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում ավազի ուղղահայաց կոնվեյերի ռեդուկտորից առաջացել էր յուղի արտահոսք: Փոխարինվեց խծուծը և այն աշխատում է անխափան: Նաև խափանված էր յուղորսիչի քերիչի աշխատանքը, որը նույնպես վերականգնվեց: Կատարվեց բոլոր քերիչ սանրերի կարգաբերում:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում գտնվող պոմպակայանի մակարդակի լողանային անջատիչը շարքից դուրս էր եկել և պոմպակայանի աշխատանքը խափանվել էր: Այն փոխարինվեց նորով և այժմ աշխատում է անխափան:

- Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում էլ. ենթակայանի բարձր լարման պարպիչը շարքից դուրս էր եկել, որն էլ փոխարինվեց նորով: Կատարվեց նաև կոռոզիայի ենթարկված թիթեղների մշակման և ներկման աշխատանքներ:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում կատարվել է մանր ճաղավանդակի քերիչ սանրերի կարգաբերում: Զննվել են բոլոր ռեդուկտորները և շարժիչները: Կատարվել է նաև կոռոզիայի ենթարկված թիթեղների մշակման և ներկման աշխատանքներ: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	70,390	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	70,943	32.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	175,543	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	147,569	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	128,890	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,065	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,691	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	27,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,348	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	87
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	20
Այցեր	3
Պոմպի տեղադրում	2
Պոմպի ապամոնտաժում	2

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մայիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մայիս ամսվա ընթացքում նորոգվել է թվով 2 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վալուուֆները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 13 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 30 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել:

Թվով 2 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 58 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 9 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:


Վերանորոգվել են թվով 6 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 7 մեքենա-մեխանիզմի վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:



Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատաճանիքները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 4 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.06.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 545,894 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. մայիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	655,394	522,384	78,7
	Իրավաբանական անձ	29,316	23,510	80,2

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	726,714	567,076	78,0
	Իրավաբանական անձ	34,739	24,814	71,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 600 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մայիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3490 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1324	1697	299	3320
	Իրավաբանական անձ	63	98	9	170
	Ընդամենը	1387	1795	308	3490

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մայիս ամսին փոխարինված 3490 ջրաչափերի մոտ 60%-ը (կամ 2103 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 123,468 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մայիս ամսին գանձումը կազմել է 1,777 մլն դրամ (95 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. մայիս ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում

Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը մայիս ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մայիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 156 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 17,6 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10442	1448538647	7124	733092084	158	20991281	3335	594153967	4107	360135318


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 68%-ն արդեն բավարարված է և ընդամենը 2%-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.06.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,922	1,936
Բնակիչ-բաժանորդներ	5,939	1,325
Իրավաբանական անձեր	1,983	611

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման և գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 259.5 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.06.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	692,639	565,406	81.63	33,602	24,806	78.82
	Առանց ջրաչափի	34,075	1,670	4.90	1,137	8	0.70

Տվյալների բազայում 01.06.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	864,722	385,926	44.63	37,445	10,282	27.46

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում՝ թաղամասային ծրագրով) շուրջ 4942 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 874 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2337	1909	81.7
գ.Պոռշյան	1573	1044	66.2
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5876	1828	32.1

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 8,833, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7,689, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1176, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,920, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1103, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,461 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,419 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Բնտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառնությունը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	369	151,336	25,077,452

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում Երևան քաղաքի մայիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.3%, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 36 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2021թ-ի մայիս ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 165 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 867 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 19 511 կՎտ/ժ. (4,29%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը կապված է եղանակային շոգ պայմանների հետ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են 254 հասցեներ: Ուսումնասիրության արդյունքում Շիրակ 8 հասցեում հայտնաբերվել է հավելագրում՝ 9535 կՎտ.ժ, որը ճշգրտվել է «ՀԷՅ» ՓԲԸ հետ:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 1237.97 կՎտ.ժ կամ 6.5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 9827 կՎտ/ժ կամ 32,9 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Կատարված աշխատանքներ

● Թվով 35 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 29 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

● Երկու հասցեներում նախկին վթարված պոմպերը փոխարինվել են նոր ձեռք բերված վարիատորային պոմպերով:

Ինվերտորների տեղադրում

● Չորս հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 76 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


Մայիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 825 466 կՎտ.ժամ կամ 57,68% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 69,419 կՎտ.ժ/ամիս կամ 3,38 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1025 կՎտ.ժ կամ 23,04%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մայիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	1229
Կառուցված ջրագիծ	մետր	881
Տեղադրված և փոխարինված փականներ	հատ	27
Կառուցված կոյուղագիծ	մետր	57
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	51
Գյումրիի և Ալավերդու կոյուղագծերի թվայնացում	կիլոմետր	48,7
Տեխնիկական պայմանների թվայնացում	հեո	104
Վանաձորի տվյալների ճշգրտում և լրացում	քաղաք	1
Զեյթուն և Արարկի համայնքների ջրագծերի թարմացում	համայնք	2
Գեղանիստ, Փարաքար տարածքների ջրագծերի թարմացում	տարածք	2
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում	համայնք	13
Արմավիր մարզի Մյասնիկյան և Բաղրամյան գյուղերի թվայնացում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	գյուղ	2
Գեղարքունիքի մարզի՝ Գավառ և Ճամբարակ քաղաքների թվայնացում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	քաղաք	2

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կոտայքի մարզի՝ Թեղիկ, և Արագածոտնի մարզի՝ Ուշի գյուղերի թվայնացում և տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	գյուղ	2
Արմավյան քաղաքի ներքին ջրային ցանցի տեղեկատվության ճշտումներ	քաղաք	1
Շենգավիթ և Շահումյան տեղամասերի համար ներքին ջրային ցանցի գոտիների բաժանման աշխատանքներ	տեղամաս	2
Արաբկիր, Էրեբունի և Զեյթուն տեղամասերի ներքին ջրային ցանցի տվյալների բազայի թարմացումներ և լրացումներ	տեղամաս	3
Գյումրի և Վանաձոր քաղաքների հիդրավիկ մոդելների կառուցում և բացակա տեղեկատվության հավաքագրում	գաղաք	2
Հիդրավիկ մոդելների ստեղծում համայնքների համար	համայնք	14
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	76
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	697
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	264
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	21

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.



Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի վրա կազմակերպվել է կանգառ, որպեսզի Նուբարաշենի ձորում փոխարինվի ջրատարի 110մ հատվածը: Արդյունքում տնտեսվել է 80լ/վ ջրաքանակ:




Թեղենիսի ջրաղբյուր

Թեղենիսի աղբյուրների վարարման ընթացքում ոչ բավարար ջրաքանակի մուտքը Ծաղկաձոր քաղաք կասկածներ է առաջացրել, ուստի կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Հայտնաբերվել է տվյալ ջրատարի խցանման վայրը, որն էլ արգելափակում էր ջրի հոսքը դեպի քաղաք, ջրաքանակը թափվում էր աղբյուրից և անմիաթար վիճակում գտնվող մարիչ հորերից: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, ու ջրատարը մաքրվել է օտար մարմիններից: Շինարարների ուժերով վերանորոգվել են երկու մարիչ հորեր:



Արտամետ պոմպակայան

Պ/կ-ի մղման խողովակաշարի վրա հայտնաբերվել են 3 գաղտնի վթարներ, որոնց արդյունքում վերականգնվել է գյուղի ջրամատակարարումը և նվազել է պ/կ-ի էլ. էներգիայի ծախսը:



Արգնիի ջրատարներ

Արգնիի ջրատարների վրա գոյություն ունեին խափանված ջրթող փականներ, որոնցից առկա էր արտահոսք: Արգնի 2-Ծարավ աղբյուր ջրատարների միջև միջանկյալ միացման փականը փչացած էր, որը ջրաքանակի բաշխման համար ստեղծում է տեխնիկական անհարմարություններ: «Զրառ»-ի աշխատակիցների ուժերով վերանորոգվել է Ծարավ աղբյուրում գտնվող $D=400$ մմ փականը և Արգնի ջրատարի վրա գտնվող փականները:



Արարատյան ջրատար

Ջրատարի վրա 2 անգամ կազմակերպվել է կանգառ: Առաջին վթարի հետևանքով առաջացել էր վթար $Q=600-800$ լ/վ արտահոսքով, իսկ չուրը մուտք չէր գործում ք. Երևանի ջրային համակարգ: Երկրորդ կանգառի ընթացքում վերացվել են երկու հատ վթարներ: Արդյունքում տնտեսվել է 30լ/վ ջրաքանակ:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել են Գյումրի քաղաքի Տիմիրյազև փողոցով անցնող հին ջրագծերը, քանզի նշված փողոցը ՎԶԵԲ ծրագրով ենթակա էր ասֆալտապատման: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ փողոցով անցնում է $D=150$ մմ հին, այսպես կոչված, Թամանյանի ջրագիծը: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=150$ մմ $L=1750$ մ թուջե ջրագիծ:





● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Մայր Հայաստան հուշահամալիրի հարակից տարածքը, որը նախկինում եղել է տնակային ավան, իսկ ներկայումս այն գրեթե բնակեցված չէ, քանզի տարածքը հանդիսանում է կանաչ գոտի, ուստի որոշվել է տարածքում առկա $D=63$ մ Φ -ը ջրագծի մի հատվածը խցափակել: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=63$ մ $L=100$ մ Φ -ը ջրագիծ:



● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղուն հարակից ջերմոցների մոտ առկա հին, վթարված ջրագիծը: Պարզվել է, որ այն սնուցում է հարակից մի քանի տները: Ջրագիծը, որը միացված էր և՛ Ղազանչի 1, և՛ Ղազանչի 2 ջրատարներից, ամբողջությամբ գտնվում էր քայքայված և վթարային վիճակում, ուստի այն խցափակելուց հետո, որոշվել է ներանցում կատարել տվյալ խողովակով ապահովելով հարակից տների ջրամատակարարումը: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=150$ մ $L=50$ մ պողպատե ջրագիծ, ներանցում կատարվել նոր $D=40$ մ $L=100$ մ և $D=32$ մ $L=20$ մ Φ -ը ջրագծով:



● Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցում, Գոտիավորման վարչության կողմից կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար $D=200$ մ ասբեստից խողովակի վրա, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



Հրազդան քաղաք

● Ջրառատ թաղամասում Գոտիավորման վարչության կողմից կատարված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են 2 վթարներ նշված թաղամասը սնուցող $D=300$ մմ ջրագծի վրա, ինչի արդյունքում տնտեսվել է $Q=4$ լ/վ ընդհանուր ջրաքանակ:



● Միկրոշրջան թաղամասը սնուցող 500մմ պողպատե ջրագծի վրա Գոտիավորման վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են մի քանի ապօրինի միացումներ ու վթարներ:



● Գոտիավորման վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների ժամանակ «Միկրո» ՕԿՁ-ի ելքերից մեկի՝ $d=500$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել են 2 վթարներ:



● Սևան ՇՏ-ի և Գոտիավորման վարչության համատեղ ուսումնասիրության արդյունքում որոշվել է Չկալովկա գյուղի մուտքագծում տեղադրել $D=100$ մմ ՃԿՓ, ինչի արդյունքում տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



● Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա Գոտիավորման վարչության կողմից վթարադրոնողական աշխատանքների արդյունքում Չկալովկա գյուղում հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=8$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Արաբկիր տեղամասի Քոչար և Տիգրանյան փողոցների խաչմերուկում առանձնատների ջրագծի վրա տեղադրված ՃԿՓ-ի շնորհիվ տնտեսվել է 5լ/վ ջրաքանակ, իսկ ավելի վաղ Արդության-Մալիապանց փողոցների խաչմերուկում տեղադրված մուտքի ՃԿՓ-ի շնորհիվ հնարավորություն է ստեղծվել շարունակաբար 11-րդ գոտու ողջ ավելցուկային ճնշումը նվազեցնել և տնտեսված $Q=10-15$ լ/վ ջրաքանակը գիշերվա ժամերին ուղղել դեպի Կովկասյան ՕԿՁ:



● «Զեյթուն» տեղամասում Գոտիավորման վարչության կողմից վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Սարկավազի 54/1-ի դիմաց, Քանաքեռ 12-րդ փողոցին սնուցող ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Շահագործումից հանվել է $L = 60$ մ և $D=100$ մմ վթարված ջրագիծ, որի միջոցով ջուրը լցվում էր հին ցանց: Արդյունքում տնտեսվել է $Q = 10$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասում Գոտիավորման վարչության կողմից վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Չեխով 6 շենքի մուտքագծի վրա, որը սնվում է Չեխով 10 Պ/կ-ից, հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=6$ լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասում Գոտիավորման վարչության կողմից վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Խաղաղ Դոն 1-ին շենքի մոտ հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 7$ լ/վ ջրաքանակ:



● «Շահումյան» տեղամասում Գոտիավորման վարչության կողմից վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Բաֆու 69 և թիվ 93 մանկապարտեզի բակում, հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=15$ լ/վ ջրաքանակ:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ


Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Իջևանի** «Ազատամուտի» ք/կ-ում կատարվել է հիպոքլորիդի հաբի սարքավորման մակարդակի տվիչի նորոգում՝ հիպոքլորիդի հաբի սարքավորման վերականգնման նպատակով:



● **Քաղաք Մարտունու** «Ծակքար» ք/կ-ում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի դոզատորի կոլբան և տեղադրվել է ալյուս փական: Այն հնարավորություն է ընձեռել հեղուկ քլորի համակարգի անվտանգ աշխատանքի համար:

● **Քաղաք Ապարանի** «Եզնակ» ք/կ-ում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի դոզատորի կուլբան: Այն հնարավորություն է ընձեռել հեղուկ քլորի համակարգի անվտանգ աշխատանքի համար:



● **Քաղաք Գավառի** «Գանձակ» ք/կ-ում փոխարինվել է դոզավորման պոմպի զննված մեմբրանը և նորոգվել է ցիրկուլացիոն պոմպը հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● **Քաղաք Հրազդանի** «Մաքրավան» ք/կ-ում տեղադրվել է ֆիլտր՝ քլորակայան մտնող քլորաջրի վրա հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● **Քաղաք Վանաձորի** «Լոռի-Ղաղրի ձոր» ՋՄԿ-ում արագ գործողության ֆիլտրերի լվացման մետաղական DN=400, L=25գծ/մ կոռոզիայի ենթարկված խողովակաշարը իր ձևավոր մասերով փոխարինվել է նորով: Ջրակորուստների նվազեցում և ֆիլտրերի լվացման համար անհրաժեշտ պահանջված ջրաքանակի ապահովում:

● **Քաղաք Բերդի** «Բլղան» ՋՄԿ-ի տեխնոլոգիական մասնաշենքում մրրկային խառնարանը, մետաղական խողովակաշարերը, ձևավոր մասերը և փականները ներկվել են հակակոռոզիոն ներկով ջրատար համակարգի պահպանման և արտաքին տեսքի բարելավման նպատակով:



3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 45853 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 12505: Երևան քաղաքի համար եղել է 9876 զանգ:
- Մայիս ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 79.0 %, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2629 զանգ (21.0%); Շահագործման վերաբերյալ ստացվել է 33348 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 25585 զանգ (76.7%), իսկ մարզերինը՝ 7763 զանգ (23,3%):


185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	<i>Ստորաբաժանում</i>	
<i>Առևտրային</i>	Ընդամենը	12505
	ԵՐԵՎԱՆ	9876
	ՄԱՐԶԵՐ	2629
<i>Շահագործում</i>	ՀԱՆԱԳՈՐԾՈՒՄ	33348
	ԱՐԵՎԵԼՔ	12151
	Շենգավիթ	2140
	Կենտրոն	2736
	Հյուսիս(Ավան, Նոր Նորք)	1902
	Էրեբունի	2068
	Պոմպ	748
	Մարզեր	2557
	այդ թվում Կոյուղու վթար	65
	այդ թվում Դիտահորի խցանում	2683
	ԱՐԵՎՍՏՈՒՏՔ	21197
	Արաբկիր	3007
	Քանաքեռ-Զեյթուն	2350
	Մաշտոց	4522
	Շահումյան	3974
	Պոմպ	2053
	Մարզեր	5206
	այդ թվում Կոյուղու վթար	120
	այդ թվում Դիտահորի խցանում	3791
	Ընդամենը	45853

ԼՐԱՏՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մայիսը սկսվեց Աշխատանքի միջազգային տոնով, որի կապակցությամբ համակարգի աշխատողներին իր շնորհավորական ուղերձը հղեց և նոր եղանդ ու հաջողություններ մաղթեց գլխավոր տնօրեն Մ.Շահինյանը: Իսկ դրա կարիքն իրոք շատ կար հաշվետու ամսին, որը հազեցած էր կարևոր աշխատանքներով ու արտակարգ իրավիճակներով: Հանրային կապերի բաժնի /ԶԿԲ/ ակտիվությունն էլ դրանց համապատասխան էր:



Հենց նույն օրը, մայիսի 1-ին, տեղի ունեցած «Գառնի-Երևան» մայրուղային ջրատարի վթարի և դրա հետևանքների վերացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ԶԿԲ-ն 2 օրվա ընթացքում ապահովեց 5 հրապարակում, այդ թվում վթարի վայրից ստացվող տեսանյութերով ու լուսանկարներով: Գործընթացը սկսվեց վթարի մասին հաղորդումից և ավարտվեց ջրատարի վերաշահագործմամբ: Դրանք հասանելի եղան ավելի քան 12,5 հազար ընթերցողի facebook.com/veolia.armenia-ի էջում և զգալիորեն մեղմեցին հանրային դժգոհությունը ջրի անբավարարությամբ պայմանավորված իրավիճակից:


Իրադարձության լուսաբանման նման ակտիվ տեխնոլոգիա կիրառվեց նաև Երևանի Լենինգրադյան փողոցում վթարված խոշոր ջրագծի փոխարինման դեպքում, որի պատճառով հարկ եղավ դադարեցնել «Արզական-Երևան» մայրուղային ջրատարի աշխատանքը: Նորից սպառողներին սկզբում ներկայացվեց ջրանջատման պատճառները, գործի ծավալը, նախապատրաստությունը, իսկ հետո բուն աշխատանքները: Տարբերությունը միայն այն էր, որ այս դեպքում աշխատանքները կատարվեցին գիշերը՝ փողոցային երթևեկությանը չխոչնդոտելու համար, համապատասխանաբար դրանք լուսաբանվեցին երեկոյան ժամը 18.00-ից մինչև առավոտյան ժամը 10.00-ն: Սակայն միևնույն է, դրանց ընթացքին հետևեցին Ֆեյսբուք սոցիալական ցանցի հազարավոր ընթերցողներ:

Ընդհանրապես, մայիսին քիչ էին խոշոր ջրատարների վթարները, դրանց վերանորոգման աշխատանքները կամ վթարվածների փոխարեն նոր ջրագծերի կառուցումը, որոնք բոլորն էլ պատշաճ կերպով ներկայացվեցին հանրությանը: Մասնավորապես, խոսքը «Ղազանչի-Գյումրի», «Մաքրավան-Աբովյան» խոշոր ջրատարների կանգառի մասին է, Էջմիածին, Վայք քաղաքներում, Նոր-Գյանք գյուղում խողովակաշարերի վթարների վերացման, իսկ Ծաղկալանջ գյուղում և Երևանի Սարի Թաղ ու Վարդաշեն թաղամասերում էլ նոր ջրագծերի կառուցման: Սակայն անկախ նման ընթացիկ աշխատանքների ծավալից, ԶԿԲ-ն շարունակել է ուշադրություն դարձրել համակարգի արդիականացմանն ու զարգացմանը, նոր տեխնիկայի ձեռքբերմանն ու տեխնոլոգիաների կիրառմանը:

Այսպես, հանրությանը տեղեկացվել է «Սիսավան» ՕԿՁ-ում վերանորոգման նոր եղանակի օգտագործման, Երևանի Մամիկոնյանց 26ա շենքի բակային պոմպակայանի արդիականացման, ավտոպարկը բեռնամարդատար «UAZ Profy» և ինքնաթափ «KAMA3» մեքենաներով համալրելու, Վեոլիայի միջոցներով Արմավիրի մարզի 5 համայնքներում 220 մլն դրամ արժեքով ջրաշինարարական խոշոր ծրագրի մեկնարկի մասին:

Հաշվետու ամսին գրացվել է նաև արտակարգ պատահարներ, որոնցից առաջինը եղանակային անոմալիաներով պայմանավորված համակարգի ինժեներական կառույցներին, մասնավորապես պոմպակայաններին և ջրաղբյուրներին, հասցված զննման է, որի հետևանքների վերացման աշխատանքների մասին ապահովվել է 2 հրապարակում:

Իսկ երկրորդը՝ աղիքային վարակի դեպքերն են Սիսիանում, որի վերաբերյալ ակտիվ բացատրական աշխատանք է տարվել ՋԼՄ-ների հետ, ինչպես նաև ապահովվել է Օպերատորի ներկայացուցիչների մասնակցությունը Հանրային հեռուստատվիքի կազմակերպած հաղորդմանը: Այս ամենի շնորհիվ սպառողներին է ներկայացվել ընկերության դիրքորոշումը և ջրի որակի վերահսկման համակարգը:



Ջրի որակի ապահովմանն ուղղված մշտական աշխատանքին է վերաբերում նաև Կապանում և Վանաձորում Ջրի մաքրման կայանների արդիականացման ու վերանորոգման ու գրանցված արդյունքների մասին հաղորդագրությունը: Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Հաշվետու ամսում բաժնի կողմից մշակվեց և Գլխավոր տնօրենի 07/05/2021 թվականի 34-Լ հրամանով գործողության մեջ դրվեց Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգը»:

● ՈԱԱ բաժնի կողմից մշակվեց և Ընկերության ղեկավարության քննարկմանը ներկայացվեց Վեոլիա Գրուպի «Բարձր ռիսկային երկրներ ուղևորվելու անվտանգության ընթացակարգ (SUR PRO DPR-02)» փաստաթղթի հայերեն տարբերակը:

● ՈԱԱ բաժինը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներով, մշակեց Ընկերության հիպոթրիդի հաբերով վարակազերծման տեխնոլոգիայից հեղուկ քլորով վարակազերծման տեխնոլոգիայի անցումով պայմանավորված թվով 4 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրերը:

● Մշակվեցին «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկռանների շահագործող օպերատորների/վարորդների և պատասխանատու անձանց որակավորման» և «Քլորակայանների (ԱՎՕ-ների) անվտանգ շահագործման և տեխնիկական վիճակի հսկողության պատասխանատու անձանց որակավորման» դասընթացների նյութերը:

● Բաժնի կողմից կատարվել են 2021 թվականին նախատեսվող բժշկական հետազոտությունների և զննության իրականացման նախապատրաստական աշխատանքները և մշակվել են դրանց կազմակերպման պլան-ժամանակացույցերը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.3. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● Հաշվետու ամսում բաժինը, Ընկերությունում աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների ապահովման նպատակով, «Նարեկ» գիտահետազոտական ընկերության հետ համատեղ, իրականացրեց ՈԱԱ բաժնի 2 աշխատողի՝ ԱՎՕ-ի զննման, վերահսկման և սպասարկող անձնակազմի հրահանգավորման գծով պատասխանատու անձի վերաորակավորման դասընթաց և գիտելիքների ստուգում:


● Հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկռանների վարորդների որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում՝ Ընկերության Հարավ, Հյուսիս ՇՏ-ների, ՔնԽՁՄԿ և Կենտրոնական ավտոհավաքակայանի թվով 8 աշխատողի համար:




Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացը կազմակերպվեց COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացի մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:



● Ընկերության ղեկավար անձնակազմի 15 աշխատողի համար Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Ճգնաժամի կառավարման ընթացակարգ SUR PRO GC-01» հեռավար դասընթացը:




2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներ նախօրոք մշակված պլան-ժամանակացույցերի համաձայն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 27 (10 քլորակայան, 9 պոմպակայան, 4 կաթսայատուն, 2 ՕԿՋ, 1 ԿՄԿ և 1 ՋՄԿ) ՀՏԿ-ներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Մայիս ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- «Վեոլիա» Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիբեռ անվտանգության նախագծի շրջանակներում “Themis” համակարգում ստեղծվել է հարցաշար՝ ինդուստրիալ ոլորտի առկա կիբեռ ռիսկերի գնահատման, և հետագա աշխատանքների ճանապարհային քարտեզի ստեղծման համար:

- «Վեոլիա» Խմբի կիբեռ անվտանգության մակարդակի ավելացման համար ստուգվել է «Վեոլիա» Խմբի գլխամասի և այլ երկրներում գտնվող մասնաճյուղերի ցանցային կապը՝ կապի առկայությունը, թույլատրված սերվերային և այլ ցանցային ռեսուրսներից օգտվելու իրավունքները և այլն: Փակվել են ոչ արդիական և չկիրառվող արտոնությունները:

- Անցակցվել է հանդիպում «Հայկական Ծրագրեր» ընկերության մասնագետների հետ, քննարկվել են ծրագրային ապահովման նոր հնարավորությունների, սերվերների օպերացիոն համակարգերի և տվյալների բազայի թարմացման աշխատանքների, առկա գործիքակազմի կիրառման պրոցեսների և այդ պրոցեսների փոփոխությունների ու ավտոմատիզացման հնարավորությունների ուղղությամբ:

- Իրականացվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ք. Երևան, Շենգավիթ Արտաշիսյան պողոտա 41 շենք, 51 տարածքում գտնվող նոր տեղամասի ցանցի, հեռախոսային համակարգի և տեսահսկման համակարգի կառուցման աշխատանքները:

- Բարեհաջող հանձնվել են Google Admin համակարգի օգտագործման քննությունները, և ձեռք են բերվել Google Admin համակարգի մուտքի արտոնությունները, Google դիտարկիչները և ChromeBook սարքերը՝ հեռահար և կենտրոնացված կառավարման համար:

- Կիբեռ անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով ստեղծվել են նոր տեսակի աղմինիստրատիվ մուտքանուններ, տարանջատված արտոնություններով, IT բաժնի աշխատակիցների համար:

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:

- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են չաշխատող մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ՝ կազմակերպության աշխատակիցների մոտ:

- Ստեղծվել է նոր սերվեր՝ “IU Networks” ընկերության կողմից առաջարկվող զանգերի կենտրոնի՝ նոր համակարգի, փորձարկման համար:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Ստեղծվել են նոր օգտանուններ veolia.com G Suite համակարգում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների համար:

- Սպասարկվել է մոտ 290 զանգ IT բաժնի աջակցության համարով:

- Գրանցվել և փակվել է մոտ 350 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Մայիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:

- SS վարչության աշխատակիցների ողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:

- Տեղի է ունեցել հանդիպում «Հայկական Ծրագրեր» ընկերության ծրագրավորողների հետ՝ ծրագրային նոր մեխանիզմի ներդրման ուղղությամբ:

- Շատ ակտիվ կերպով տեղադրվել են EDR սենսորները բոլոր այն վայրերում, որտեղ ավտոմատ կերպով չի իրականացվել:

- “IUnetworks” ընկերության ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել բանակցություններ՝ պայմանագրերի վերանքման ուղղությամբ, “IUConnect” ծրագրային ապահովման օգտագործման և հետագա սպասարկման վերաբերյալ՝ հաշվի առնելով “IU Networks” ընկերությունում ստեղծված իրավիճակը: Քննարկվել են զանգերի կենտրոնի ծրագրային ապահովման, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից փոփոխությունների ներդրման հնարավորությունները և ակտերնատիվ ուղիները:

- “Team Solutions” ընկերության ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել քննարկումներ՝ իրենց կողմից առաջարկվող զանգեռի կենտրոնի ծրագրային ապահովման և վերջինիս ներդրման ուղղությամբ:
- SS վարչության աշխատակիցները մասնակցություն են ցուցաբերել մայիս ամսին տեղի ունեցած աշխատանքային տոնավաճառին:

● Ակտեր.
Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Իսխաման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	7	2.8	0.5
Էրեբունի	18	12.5	2.2
Շենգավիթ	25	5.3	0.9
Կենտրոն	11	9.7	1.7
Արաբկիր	10	5.4	1.0
Մաշտոց	15	8.2	1.4
Ծառուսյան	13	7.2	1.2
Քանաքեռ-Զեյթուն	4	1.7	0.3
ԱՎԲ	98	42.4	7.0
Շիրակ	19	5.5	0.9
Արարատ	21	1.9	0.3
Աբովյան	22	23.1	3.4
Հրազդան	11	2.9	0.5
Մլավերդի	3	1.3	0.2
Արտաշատ	18	3.1	0.5
Գավառ	4	1.2	0.2
Դիլիջան	2	0.9	0.2
Եղեգնաձոր	2	2.1	0.4
Էջմիածին	11	4.3	0.7
Իջևան	5	0.4	0.1
Կապան	3	0.8	0.1
Ճամբարակ	1	0.1	0.0
Մասիս	4	1.4	0.2
Արմավիր	2	0.6	0.1
Սևան	2	0.5	0.1
Աշտարակ	14	3.8	0.6
Զարենցավան	4	2.8	0.4
Միսիան	1	0.5	0.1
Սպիտակ	3	0.5	0.1
Ընդամենը	353	153.0	25.2

- Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահովագրական գործառույթներ) Ապահովագրական և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջանոցություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	5	2.43	18	0.04
Էրեբունի	11	6.04	47	0.30
Շենգավիթ	5	2.08	44	0.27
Կենտրոն	11	4.12	78	0.54
Արաբկիր	4	1.03	54	0.42
Մաշտոց	13	8.53	60	0.42
Ծառուսյան	27	10.06	102	0.87
Քանաքեռ-Զեյթուն	4	1.64	17	0.19
Լոռի	14	0.86	37	0.14
Շիրակ	6	1.35	52	0.25
Արթիկ	4	1.74	16	0.17
Արարատ	2	0.33	7	0.08
Աբովյան	20	5.98	60	0.50
Հրազդան	9	2.67	48	0.39
Մլավերդի	2	0.56	20	0.14
Մշոցք	-	-	7	0.05
Սպարան	-	-	1	0.00
Արտաշատ	3	1.00	17	0.10
Բերդ	-	-	16	0.07
Գավառ	1	0.52	18	0.16
Գորիս	2	1.03	1	0.00
Դիլիջան	2	0.77	1	0.00
Եղեգնաձոր	2	0.52	20	0.17
Էջմիածին	4	0.73	31	0.29
Թալին	2	22.72	5	0.91
Իջևան	4	0.12	15	0.05
Կապան	5	1.80	34	0.23
Մասիս	10	6.24	25	0.17
Նոյեմբերյան	-	-	6	0.03
Արմավիր	2	58.73	16	0.05
Ջերմուկ	2	0.52	-	-
Վաթ	-	-	21	1.20
Աշտարակ	10	3.80	34	1.00
Զարենցավան	7	2.92	44	0.17
Միսիան	-	-	15	0.19
Սպիտակ	-	-	4	0.02
Ստեփանավան	3	2.06	9	0.72
Տաշիր	-	-	2	0.01
Ընդամենը	196	152.91	1002	10.29



«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am